զի քեւ աճեցին եւ ծաղկեցին որպէս զարմաւենի եւ բազմացին քան զմայրսն մայրոյն Սեղովմա՝ եւ զուարճացին իբրեւ զխոտ Ջրարբի· եւ զուռ տնկեալ ի գնացըս ջուրց՝ ասելով թէ Աստուծոյ եմ ես զիր հանելով եւ խրախուսելով: Քանզի սովաւ վերստին լուսաւորեցեր զլուսաւորչին լուսաւորեալքս, պայծառացուցեր եւ բարձրացուցեր գրաւորական տառիւս որ ձեռամբ սորա ետուր մեզ, սակս որո պարգեւողիդ փառս վերառաքեսցուք այժմ եւ յաւիտեան:

Եւ կատարեալ զգոհութիւնն, առնոյր ընդ իւր զերանելին եւ ելանէր յԻննակնեան վանսըն՝ առ աստուածարեալ միանձունսն որ էին թըւով հինգ հարիւր միակամ եղբայր: Որոց բերկրեալ ընդ գալուստ սրբոյն՝ մանաւանդ ընդ աստուածատուր նշանն, եւ մտեալ ի տաճարն՝ աղաղակեն Զօրախեղեն եւ զՄաքըն՝ զԴրանն եւ զԹարկին, տալով փառս եւ աւրհնութիւն առաքողին եւ հայցէին շնորհել ընդ երկայն աւուրս: Իսկ աստուածային եւ քահանայապետական գլուխն, խոնարհեալ խաւսէր ի խորոց սրտէ իբրեւ ընդ կենդանի ընդ Նըշխարս Կարապետին:

Ո՜վ ձայն բանին եւ չաւուշ[ա] արքային·

ա· ռամկական բառ է·